


շատ ԿԲ-ների համար, և յուրաքանչյուր երկրի կառավարություն կգնահատի այն որպես արդյունավետ ուղի:

Նոր ռազմավարության ընտրության հետ առաջարկվում է հետևյալ գնաճային հայեցակարգը՝



ԱՐՄԵՆ ԱՐՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐՋԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնահարցերը ներկայումս բազմաթիվ երկրների կառավարությունների ուշադրության կենտրոնում են: Այս ոլորտի հիմնահարցերով են զբաղվում նաև մի շարք հանձնաժողովներ, կազմակերպություններ ու ասոցիացիաներ, որոնք բարձրացնում են ոլորտում առկա խնդրահարույց հարցերը, ներկայացնում իրենց առաջարկությունները, լուծման տարբերակները: Նշված ոլորտի ամենաբարդ հիմնահարցերից են հարկային համակարգին առնչվողները, քանի որ ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացման հիմքերն առաջին հերթին հարկավոր է փնտրել արդյունավետ գործող հարկային համակարգում:

Այս հոդվածում, համաշխարհային փորձի և Հայաստանի հարկային օրենսդրության և փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեությունը բնութագրող մի շարք ցուցանիշների համադրմամբ, փորձենք ներկայացնել հարկային համակարգի հիմնական թերությունները:

Փոքր ու միջին ձեռնարկությունների համար հարկային համակարգի բարձր ծախսերի և զարգացման խոչընդոտների հիմնական պատճառ են՝

- հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները,
- հարկային համակարգի ոչ ամբողջականությունը և համակարգավածությունը,
- հարկային վարչարարության տարբեր ձևերի գոյությունը,
- հարկային օրենսդրության ոչ պարզությունը,
- հարկային վճարումների կարճ և ոչ ճկուն վերջնաժամկետները,
- հարկային խորհրդատվության ծախսերը,
- գրանցման գործընթացների բարդությունը:

Իրենց թույլ կամ ուժեղ կողմերով գրեթե բոլոր երկրներին բնորոշ են այս հիմնահարցերը, որոնք լուծման կարիք ունեն։ Եթե ընդունենք, որ Հայաստանն ընտրել է եվրոպական երկրների հետ ինտեգրացման ուղին, ապա դա նշանակում է, որ այս ոլորտում ևս կան բավականին շատ անելիքներ, որպեսզի և՛ օրենսդրական առումով, և՛ իրենց տնտեսական ներուժով մեր երկրի ՓՄՁ-ները կարողանան ինտեգրվել եվրոպական ընտանիքի երկրներին։

Եվրոպայում կան 23 մլն ՓՄՁ-ներ, որոնք ապահովում են ավելի քան 99 մլն աշխատատեղ, և որոնց գործունեության կարգավորման հարցերը Լիսաբոնի Հանձնաժողովի¹ կողմից մշակված ռազմավարական ծրագրի հիման վրա փորձում է կարգավորել Եվրոպական Հանձնաժողովի ձեռնարկատիրության և արդյունաբերության հարցերի վարչությունը։ Իհարկե, որոշ դեպքերում բավականին բարդ է համեմատություն անցկացնել եվրոպական և Հայաստանի ՓՄՁ-ների միջև, քանի որ հսկայական տարբերություններ կան։

Բայց և այնպես կան մի շարք առանցքային հարցեր, որոնք նույնն են գրեթե բոլոր երկրների համար։ *Դրանք են՝ տեղեկատվությունը, գրանցման գործընթացները, հարկային հաշվապահությունը, փաստաթղթերի լրացումն ու վճարման համակարգերը։*

Տեղեկատվության թափանցիկության հարցերը շատ կարևոր են, քանի որ ՓՄՁ-ներն իրենց տեղեկատվությունը հիմնականում ստանում են հարկային ծառայությունների կողմից հրապարակվող նյութերից, ինչպես նաև հարկային ծառայությունների համապատասխան ինտերնետային կայքերից։ Որոշ երկրներ օրենսդրական փոփոխությունները և համապատասխան ցուցումները ձեռնարկություններին ուղարկում են էլեկտրոնային փոստի (e-mail) միջոցով, ինչպես նաև կազմակերպում են համապատասխան թրեյնինգներ և սեմինարներ՝ ձեռնարկությունների հաշվապահներին վերապատրաստելու և իրազեկելու համար, կամ ստեղծում են կենտրոններ, որտեղից ձեռնարկությունները կարող են ստանալ համապատասխան տեղեկատվություն։ Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ տեղեկատվության փոխանցման աղբյուրներից Հայաստանի ձեռնարկություններն այնքան էլ չեն կարողանում օգտվել, որն, իհարկե, չի կարող բացասաբար չանդրադառնալ նրանց գործունեության արդյունքների վրա։

Հաջորդ հիմնահարցը պայմանավորված է գրանցման գործընթացներով։ Ձեռնարկություններն իրենց գործունեությունը սկսելուց առաջ պետք է անցնեն մի շարք գործընթացներ՝ կապված կազմակերպության ստեղծման և գրանցման հետ։ Հայաստանում ձեռնարկատիրություն սկսելու համար պահանջվում են թվով 9 գործընթացներ, 18 օր ժամանակ, իսկ լիցենզավորված գործունեություն իրականացնող ձեռնարկությունները պարտավոր են անցնել 19 գործընթացների միջով՝ դրանց վրա ծախսելով ավելի քան 116 օր²։ Այս ամենը, իհարկե, բավականին բարդացնում է ձեռնարկատիրական գործունեություն սկսելը, բացի այդ ձեռնարկությունները ստիպված են գործ ունենալ մի շարք պետական մարմինների հետ։ Համաշխարհային պրակտիկայում կան մի շարք դեպքեր (Շվեյցարիա, Չեխիա և այլն), երբ ձեռնարկությունները, առնչվելով ընդամենը մեկ մարմնի հետ, կարող են ավարտել այս ամբողջ գործընթացը, դեռ ավելին՝ որոշ երկրներում անգամ գործում է ձեռնարկությունների գրանցման և հարկերի մուծման էլեկտրոնային համակարգ։ Այսինքն՝ այստեղ նվազագույնի են հասցված բյուրոկրատական շփումներն ու կատարվող ծախսերը, ինչպես նաև առավելագույնս պարզեցված է գրանցման գործընթացը։

Կարևոր ոլորտ է համարվում նաև հարկային հաշվապահությունը։ Աշխարհի երկրներից շատերում հարկային հաշվառման համակարգն ունի ամբողջական կամ համալիր բնույթ, ստացվում է այնպես, որ հսկա կորպորացիաները և փոքր ձեռնարկությունները պարտավոր են լրացնել միևնույն փաստաթղթերը։ Այս երևույթը հանգեցրել է նրան, որ եվրոպական երկրներից

¹ Lisbon European Council, 23 and 24 March 2000. Conclusions available at: http://www.consiliium.europa.eu/ueDocs/cms_Data/docs/pressData/en/ec/00100-r1.en0.htm.
² Doing Business 2008, www.doingbusiness.org.

շատերն այժմ փորձում են ձեռնարկությունների դասակարգման հիման վրա պարզեցնել նաև հարկային հաշվապահության համակարգը, այսինքն՝ ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Բավականին մեծ թվով երկրներ (*Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Սլովենիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Իսպանիա*) վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացրած հարկային բարեփոխումների արդյունքում անցում են կատարել էլեկտրոնային լրացման համակարգին, որն իր դրական ազդեցությունն է թողել կազմակերպությունների գործունեության վրա:

Մյուս կարևոր գործոնը, որի մասին կցանկանայինք խոսել, կապված է վճարումների քանակի և ժամկետների հետ: Առավել բարդ հարկային համակարգ ունեցող երկրները ստիպված են տարվա ընթացքում կատարել մի շարք հարկային վճարումներ: Փոքր և միջին ձեռնարկությունների համար դա լուրջ խնդիր է անձնակազմը մեծացնելու տեսանկյունից:

Շվեյցարիայում գոյություն ունի հարկերի վճարման «Online» - «օնլայն» համակարգ: Այս համակարգի առավելությունն այն է, որ կորպորացիաների եկամտահարկը, ԱՀՀ-ը, սոցիալական վճարները, աշխատավարձից գանձվող հարկերը վճարվում են միևնույն կարգով: Համակարգի հիմնական առավելությունը հարկերի մույնականացված հաշվարկման գործընթացն է: Ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների՝ զարգացող երկրներից շատերում՝ Սիրիա, Պապու Նոր Գվինեա, Զիմբաբվե և այլն, ձեռնարկատերերը ստիպված են ներկայանալ հարկային ծառայություն և հարկային տեսուչի հետ համաձայնության գալ վճարվելիք հարկերի գծով կատարված հաշվարկների ճշգրտության վերաբերյալ: Օրինակ, Կոնգոյի Հանրապետությունում ձեռնարկությունները տարվա ընթացքում պարտավոր են կատարել թվով 89 վճարումներ, դրանց վրա ծախսել 106 օր և վճարել իրենց շահույթի ավելի քան 65.4 %-ը: Բացի այդ կազմակերպություններն այս երկրում ստիպված են լրացնել 50 էջ փաստաթղթեր կորպորատիվ եկամտահարկի և աշխատավարձի վճարման ու պահումների կատարման համար: Եթե համեմատելու լինենք Բելառուսի և Շվեյցարիայի հարկերի վճարման համակարգերը, ապա պետք է նշել, որ Շվեյցարիան օնլայն մեկ ձևաթղթով իրականացնում է բոլոր հարկային վճարումները, որն ի դեպ շատ ավելի արդյունավետ է, քան Բելառուսում մեկ տարվա ընթացքում 124 անգամ կատարվող վճարումների համակարգը: Եվ այն՝ երկրները, որոնք ունեն հարկային վճարման բարդ համակարգ, չեն կարողանում ձևավորել արդյունավետ ձեռնարկատիրական միջավայր, որի պատճառով նվազում է տվյալ երկրում ձեռնարկությունների թիվը, քանի որ նման պարագայում նրանց գործունեությունը դառնում է աննպատակահարմար: Օրինակ, Բրազիլիայում, իրականացվեց մի ծրագիր, որը պարզեցրեց հարկերի վճարման համակարգը, արդյունքում գրանցվող ձեռնարկությունների թիվն ավելացավ 13 %-ով:

Այն երկրները, որոնք շարժվում են հարկային համակարգի պարզեցման ճանապարհով, շահում են նաև գործազրկության կրճատման բնագավառում, այսինքն՝ կորելացիոն կապ գոյություն ունի հարկային համակարգի պարզեցման և գործազրկության մակարդակի կրճատման միջև, որն ունի իր բացատրությունը. հարկային համակարգի պարզեցումն իր անմիջական ազդեցությունն է թողնում փոքր և միջին ձեռնարկատիրության համակարգի զարգացման վրա, որտեղ ընդգրկված են մեծ թվով աշխատողներ, հետևապես, խթանելով ՓՄՁ-ների գործունեությունը հարկային համակարգի կատարելագործման միջոցով, պետությունը շահում է նաև նոր աշխատատեղեր ստեղծելու առումով:

Շատ կարևոր է նաև այն, որ 2006 և 2007 թվականների ընթացքում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում իրականացվել են հարկային վճարումների համակարգի բարեփոխումներ, որոնք նպաստել են հարկային եկամուտների և ՀՆԱ-ի մեջ դրանց տեսակարար կշռի ավելացմանը: Օրինակ, Չեխիայում, երբ 2004 և 2005 թթ. կրճատվել են այդ հարկի հարկման դրույքաչափերը, կորպորատիվ եկամտահարկի մուտքերի տարեկան ավելացումը կազմել է 2 %: Եվ ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը վերջին 20 տարիների ընթացքում, սկսած 1985-ից, հարկային դրույքաչափերն ունեն նվազման միտում: Բայց և

այնպես որոշ աֆրիկյան և ներկայիս ԱՊՀ երկրներում դեռևս պահպանվում են հարկային բարձր դրույքաչափերը, որն, իհարկե, իր բացասական ազդեցությունն է թողնում այդ երկրների տնտեսությունների զարգացման վրա՝ սահմանափակելով հիմնականում ՓՄՁ-ների գործունեության ընդլայնումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են հարկերի վճարման ամենապարզ (հեշտ է վճարել հարկերը) և ամենաբարդ (դժվար է վճարել հարկերը) համակարգեր ունեցող երկրները:

Աղյուսակ 1

Հարկային վճարումների պարզ և բարդ համակարգ ունեցող երկրները

Ամենապարզ	Վարկանիշ	Ամենաբարդ	Վարկանիշ
Մալդիվես	1	Պանամա	169
Սինգապուր	2	Ճամայկա	170
Հոնկ Կոնգ, Չինաստան	3	Մավրիտանիա	171
Միացյալ Արաբական Էմիրություններ	4	Բոլիվիա	172
Օման	5	Գամբիա	173
Իռլանդիա	6	Վենեսուելա	174
Սաուդյան Արաբիա	7	Հարավաֆրիկյան Հանրապետություն	175
Քուվեյթ	8	Կոնգոյի Հանրապետություն	176
Նոր Զելանդիա	9	Ուկրաինա	177
Կիրիբատի	10	Բելառուս	178
Աղբյուրը՝ Doing Business database.			

Ուսումնասիրելով հարկերի վճարման ամենապարզ և ամենաբարդ համակարգ ունեցող երկրների փորձը և դրանց վարկանիշերը՝ նկատում ենք, որ անհրաժեշտ է մախ և առաջ կրճատել մեկ տարվա ընթացքում կատարվող վճարումների քանակը, որը, օրինակ, Հայաստանում կազմում է 50: Երկրորդ՝ անհրաժեշտ է կրճատել հարկերի վճարման վրա ծախսվող ժամանակը, պարզեցնել գործընթացներն ու ընթացակարգերը, քանի որ ամբողջ աշխարհում կան մոտ 10 երկրներ, որտեղ հարկերի վճարման ժամանակը գերազանցում է 1000 ժամը, և դրանցից մեկը Հայաստանն է, իսկ եթե կատարենք պարզ հաշվարկ՝ 1000 ժամը վերածելով օրերի և այնուհետև աշխատանքային ժամերի, ապա կստացվի մոտ 150 օր: Այսինքն՝ Հայաստանում ձեռնարկությունները հարկային մարմինների հետ աշխատելու համար տարվա ընթացքում ծախսում են հսկայական ժամանակ, որն, իհարկե, չի կարող իր բացասական հետևանքները չունենալ ցանկացած ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունավետության վրա:

**Ամենապարզ և ամենաբարդ հարկերի վճարման
համակարգ ունեցող երկրները**

Վճարումներ (մեկ տարվա ընթացքում)			
Ամենաքիչ		Ամենաշատ	
Մալդիվես	1	Վենեսուելա	70
Շվեդիա	2	Ճամայկա	72
Հոնկ Կոնգ, Չինաստան	4	Դոմինիկյան Հանրապետություն	74
Նորվեգիա	4	Դրոգակյան Հանրապետություն	75
Սինգապուր	5	Մոնտենեգրո	88
Աֆղանստան	6	Կոնգոյի Հանրապետություն	89
Կիլիբատի	7	Ռումինիա	96
Լատվիա	7	Ուկրաինա	99
Մավրիտանիա	7	Ուգանդա	118
Նոր Զելանդիա	8	Բելառուս	124
Ժամանակ (ժամերը տարվա ընթացքում)			
Ամենաքիչ		Ամենաշատ	
Մալդիվես	0	Չեխիա	930
Արաբական Միացյալ Էմիրություններ	12	Ադրբեջան	952
Սինգապուր	49	Վիետնամ	1050
Լյուքսեմբուրգ	58	Բոլիվիա	1080
Օման	62	Հայաստան	1120
Շվեյցարիա	63	Նիգերիա	1120
Նոր Զելանդիա	70	Բելառուս	1188
Մենո Լուիս	71	Կամերուն	1400
Իռլանդիա	76	Ուկրաինա	2085
Սեյշելյան Հանրապետություն	76	Բրազիլիա	2600
Ընդհանուր հարկի բեռ (շահույթի որ %-ն է կազմում)			
Ամենացածր		Ամենաբարձր	
Վանուատու	8.4	Էրիտրեա	84.5
Մալդիվես	9.1	Ուգանդա	96.3
Արաբական Միացյալ Էմիրություններ	14.4	Մավրիտանիա	107.5
Քուվեյթ	14.4	Արգենտինա	112.9
Սաուդյան Արաբիա	14.5	Բելառուս	144.4
Զամբիա	16.1	Հարավաֆրիկյան Հանրապետություն	203.8
Արևելյան ափ և Գազայի հատված	17.1	Կոնգոյի Հանրապետություն	229.8
Բոտսվանա	17.2	Սիերա Լեոնե	233.5
Սամոա	19.8	Բուրունդի	278.7
Լեսոտո	20.8	Գամբիա	286.7
Աղբյուրը՝ Doing Business database.			

Այժմ փորձենք համառոտակի ներկայացնել աշխարհում իրականացվող հարկային հիմնական բարեփոխումները:

2006 - 2007 թթ. աշխարհում 31 երկրներ իրականացրել են հարկային համակարգի բարեփոխումներ, որոնք ուղղված են եղել հարկային վճարումների և ընթացակարգերի պարզեցմանը: 27 երկրներ աշխարհում իրականացրել են կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափերի նվազեցում: Իրենց հարկային օրենսդրության մեջ կառուցվածքային փոփոխություններ և բարե-

փոխումներ են իրականացրել Մոլդովան, Մոնղոլիան, Սիերա Լեոնեն, Թուրքիան, Ուրուգվայը և այլն: Կոլումբիան, Իսրայելը, Դոմինիկյան Հանրապետությունը, Նիդերլանդները պարզեցրել են հարկերի վճարման գործընթացները՝ ստեղծելով էլեկտրոնային լրացման և ներկայացման համակարգեր, ինչպես նաև կրճատել են վճարումների հաճախականությունը: Բանգլադեշը, Դոմինիկյան Հանրապետությունը, Հունգարիան, Չինաստանը բարձրացրել են ձեռնարկություններից հարկվող հարկային դրույքաչափերը: Բանգլադեշը բարձրացրել է կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափերը շահույթի 37.5 %-ից մինչև 40 %: Վենեսուելան ներկայացրել է երեք նոր հարկատեսակ: Բուլղարիան կրճատել է կորպորատիվ եկամտահարկը՝ 15 %-ից հասցնելով մինչև 10 %, իսկ աշխատավարձից պահվող հարկերը՝ 7 % - այն կետով, ինչպես նաև ներդրել է եկամտահարկի և այլ վճարների վճարման էլեկտրոնային համակարգ:

Թուրքիան իր հարկային համակարգի բարեփոխումներով առաջավոր դիրք է գրավում աշխարհում հարկային բարեփոխումներ իրականացնող երկրների շարքում, քանի որ 2005 թ. կրճատել է եկամտահարկի 30 % դրույքաչափը մինչև 20 %, ինչպես նաև մշակել է կորպորատիվ հարկերի մասին նոր օրենք և ներդրել է e-filing – էլեկտրոնային լրացումների համակարգը, որը 31 ժամով կրճատել է ձեռնարկությունների կողմից հարկային կարգավորումների վրա ծախսվող ժամանակը:

Աղյուսակ 3

**2006 – 2007 թթ. ընթացքում հարկային դրույքաչափերի
բարեփոխումներ իրականացրած երկրները**

Շահութահարկի կրճատումներ Ադրբեջան, Բուլղարիա, Կոլումբիա, Կոտ Դիվուար, Հունաստան, Իսրայել, Դազախստան, Դոմինիկյան Հանրապետություն, Լեսոտո, Մակեդոնիա, Մալազիա, Մավրիտանիա, Մեքսիկա, Մոլդովա, Մոնղոլիա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Սլովենիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Իսպանիա, Սիրիա, Տրինիդադ և Տոբագո, Թունիս, Թուրքիա, Ուրուգվայ, Ուգանդա, Արևմտյան ափ և Գաբոնի հատված
Աշխատավարձից վճարվող հարկերի և սոցիալական հատկացումների կրճատումներ Ալբանիա, Բուլղարիա, Իսրայել, Դոմինիկյան Հանրապետություն, Մեքսիկա, Մոլդովա, Նիդերլանդներ, Ռումինիա, Սեյելյան Հանրապետություն, Սլովենիա, Ուգանդա, Հարավաֆրիկյան Հանրապետություն
Հարկային վճարումների և գործընթացների պարզեցում Ադրբեջան, Բուլղարիա, Կոլումբիա, Լեսոտո, Մալազիա, Նիդերլանդներ, Թուրքիա, Ուգանդա
Հարկային օրենսդրության փոփոխություններ և լրամշակումներ Մոլդովա, Մոնղոլիա, Սիերա Լեոնեն, Սիրիա, Հայաստան, Թուրքիա, Ուրուգվայ
Հարկերի թվի կրճատում Կոլումբիա, Իսրայել, Դոմինիկյան Հանրապետություն, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Ուրուգվայ, Ուգանդա

Աղբյուրը՝ Doing Business database.

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մեծ թվով երկրներ 2006/07 թթ. ընթացքում իրականացրել են մի շարք հարկային բարեփոխումներ: Բացառությամբ Բուլղարիայի՝ 8 երկրներ կրճատել են կորպորատիվ եկամտահարկը, 6 երկրներ՝ սոցիալական հատկացումները, որոնք վճարվում են ամեն մի աշխատողի համար: Ուգանդայում կրճատվել է կորպորատիվ

եկամտահարկը. 2005-ի 15 %-ի փոխարեն 2006-ին կազմել է 12 %, իսկ 2007-ի բարեփոխումների արդյունքում այն հասցվել է 10 %-ի, որն ուժի մեջ է մտել 2008 թվականից: Աստիճանաբար կրճատվել են նաև սոցիալական հատկացումներն աշխատավարձից. 2004-ի 33%-ի փոխարեն 2007-ին այն կազմել է 24 %: Այս ամենից բացի նախատեսվում է նաև մեկանգամյա վճարման համակարգի ներդրում փոքր ձեռնարկությունների համար, որն էականորեն կբարձրացնի դրանց գործունեության արդյունավետությունը:

Հարկային բարեփոխումների բնագավառում ամենահավակնոտ բարեփոխումն է իրականացրել Մոլդովան՝ կրճատելով կորպորատիվ եկամտահարկը 15 %-ից մինչև 0 %, որն ուժի մեջ է մտել 2008 թվականից, իսկ 2006-ին այն կազմում էր 18 %: Մակեդոնիան նախատեսում է կորպորատիվ եկամտահարկի աստիճանական կրճատման գործընթացը շարունակել և 2008-ին այն հասցնել 10 %, 2007-ի 12 և 2006-ի 15 %-ի փոխարեն:

Աղյուսակ 4

Աշխարհի որոշ երկրներում կորպորատիվ եկամտահարկի տոկոսադրույքների կրճատումները 2006/07 թթ. ընթացքում

Տարածաշրջան	Կորպորատիվ եկամտահարկի տոկոսադրույքների կրճատումներ (%)	
Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա	Ադրբեջան	24 - 22
	Բուլղարիա	15 - 10
	Հրդստանի Հանրապետություն	20 - 10
	Մակեդոնիա	15 - 12
	Մոլդովա	18 - 15
	Սլովենիա	25 - 23
	Թուրքիա	30 - 20
	Ուզբեկստան	15 - 12
Սահարայից ներքև ընկած աֆրիկյան պետություններ	Կոտ Դիվուար	35 - 27
	Լեսոտո	35 - 25
	Մավրիտանիա	25 - 22.5
	Հարավաֆրիկյան Հանրապետություն	12.5 - 10
Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ	Կոլումբիա	35 - 34
	Սեբսիկա	39 - 28
	Տրինիդադ և Տոբագո	30 - 25
	Ուրուգվայ	30 - 25
ՏՀՀԿ (OECD) բարձր եկամուտներով երկրներ	Հունաստան	29 - 25
	Նիդեռլանդներ	29.6 - 25.5
	Պորտուգալիա	27.5 - 26.5
	Իսպանիա	35 - 32.5
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	Իսրայել	31 - 29
	Սիրիա	35 - 28
	Թունիս	35 - 30
	Արևմտյան ափ և Գազայի հատված	16 - 15
Արևելյան Ասիայի և Օվկիանիայի երկրներ	Մալազիա	28 - 27
	Մոնղոլիա	30 - 25

Աղբյուրը՝ Doing Business database.

Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում հարկային համակարգի պարզեցման դրդապատճառը համարվում է Եվրոպական Միությանն ինտեգրման ու մրցունակ լինելու հանգամանքը, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների համար գրավիչ հարկային համակարգ ունենալը: Դա ստիպում է նաև Արևելյան Եվրոպայի երկրներին, որպեսզի նրանք պարզեցնեն իրենց հարկային համակարգերը: Այդ առումով հատկանշական է Նիդեռլանդների փորձը, որը 2005-ին կրճատեց կորպորատիվ եկամտահարկը՝ 31.5 %-ից 2006-ին հասցնելով 29.6-ի, իսկ 2007-ին՝

25.5-ի: Կրճատեց նաև թվով 3 սոցիալական հատկացումներ, ինչպես նաև ներդնելով «e-filing» էլեկտրոնային լրացման համակարգը՝ բավականին պարզեցրեց հարկային վճարումների գործընթացը:

Հարկային բարեփոխումներ են իրականացրել նաև մի շարք աֆրիկյան երկրներ՝ Սիերա Լեոնեն կրճատել է աստիճանական (կասկադային) վաճառքից հարկը, որը վճարվում է հումքի համար և կապ չունի վերջնական վաճառքի հետ, կրճատվել է 15 %-ը մինչև 10 %: 2008-ից նախատեսվում է այս հարկատեսակից անցում կատարել ավելացված արժեքի հարկին: Թվով 4 աֆրիկյան երկրներ կրճատել են իրենց շահութահարկի տոկոսադրույքները, երկուսը՝ աշխատավարձից վճարվող հարկերն ու սոցիալական հատկացումները: Բայց և այնպես Աֆրիկյան դեռևս մնում է ամենաբարձր հարկային դրույքաչափեր ունեցող տարածաշրջաններից մեկը:

Լատինական Ամերիկայի և Կարիբյան կղզիների երկրներում՝ Տրինիդադում և Տոբագոյում, իրականացված հարկային բարեփոխումների արդյունքում շահութահարկի տոկոսադրույքը կրճատվել է 5%-ով: Բարեփոխումներ են իրականացրել նաև Կոլումբիան և Ուրուգվայը, հատկապես պայմանավորված հարկերի կրճատման և համակարգի պարզեցման հետ:

Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում թվով չորս պետություններ, կատարելագործելով իրենց հարկային համակարգը, այն դարձրել են ավելի բարենպաստ ձեռնարկատիրական գործունեության և հատկապես ՓՄՁ-ների համար: Միրիան կատարելագործել է հիմնականում խոշոր հարկատուներին առնչվող բնագավառը և այլն:

Հարկային բարեփոխումները հաճախ առաջացնում են դժվարություններ, ինչպես նաև քաղաքական բանավեճերի առիթ են տալիս: Քաղաքական կուսակցությունները երբեմն ձգտում են, կրճատելով հարկերի դրույքաչափերը, իրենց վրա գրավել ընտրողների ուշադրությունը և ընտրությունների ժամանակ ավելի մեծ թվով ձայներ հավաքել, սակայն դա ունի իր բացասական հետևանքները և առաջ է բերում բյուջեի եկամուտների կրճատում և բյուջեի պակասուրդի ավելացում: Բայց շատ դեպքերում էլ հարկերի դրույքաչափերի կրճատման և հավաքած ձայների միջև գոյություն ունեցող կորելացիոն կապը ոչ բոլոր դեպքերում է ակնհայտ և ոչ միշտ է հնարավոր բացահայտել:

2005 թվականից սկսած՝ 65-ից ավելի երկրներ իրենց տնտեսություններում իրականացրել են մոտ 90 հարկային բարեփոխումներ: Փորձենք ներկայացնել բարեփոխումների հիմքում ընկած 4 հիմնական ուղղությունները.

- օնլայն փաստաթղթերի լրացման և հարկերի վճարման համակարգի ներդրում,
- հարկերի միավորում (կոմբինացում),
- հարկային վարչարարության պարզեցում,
- հարկերի դրույքաչափերի կրճատում և հարկային բազայի ընդլայնում:

Վերոնշյալ երկրներից շատերն իրենց հարկային համակարգում բարեփոխումներ են իրականացնում գրեթե ամեն տարի: Այս երևույթն, իհարկե, դրական համարել չի կարելի, քանի որ պահանջում է մի շարք ծախսեր, ինչպես նաև ձեռնարկատերերի կողմից ժամանակի կորուստ՝ օրենսդրական նոր փոփոխություններին ծանոթանալու և նոր հարկային օրենսդրությամբ աշխատելու համար: Սակայն այս ամենն աստիճանական գործընթաց է և բոլոր դեպքերում բխում է ձեռնարկատերերի շահերից:

Հարկ ենք համարում նաև նշել, որ բարեփոխումներն ու հարկային համակարգի կատարելագործումն ինքնապատասկ բնույթ չունեն, դրանք բխում են ցանկացած երկրի և՛ կառավարության, և՛ տնտեսավարող սուբյեկտների շահերից: Արդյունքում եվրոպական բազմաթիվ երկրներ հասել են մի շարք հաջողությունների, հատկապես՝

- պետական և համայնքային բյուջեներ հարկերի գանձման մուտքերի ավելացման,
- տնտեսավարող սուբյեկտների գործունեության ժամանակի առավել ռացիոնալ օգտագործման,

- ցածր դրույքաչափերով հարկերի վճարման և ՓՄՁ-ների ֆինանսական կենսունակության բարձրացման,
- համախառն ներքին արդյունքում ՓՄՁ-ների տեսակարար կշռի ավելացման,
- էլեկտրոնային վճարման արդյունքում լրացուցիչ ծախսերի կրճատման և մի շարք այլ տեսանկյուններից:

Այս ամենին կարող է հասնել մաս Հայաստանը աստիճանական բարեփոխումների միջոցով: Եվ հաշվի առնելով մաս այն հանգամանքը, որ Հայաստանի առաջիկա նպատակներից է լիարժեք ինտեգրվել եվրոպական կառույցներին և դառնալ եվրոպական ընտանիքի լիարժեք անդամ, ապա մեր երկիրը բոլոր դեպքերում պետք է անցնի բարեփոխումների այդ ուղով, քանի որ մի շարք երկրներ, որոնք վերջին մի քանի տարիներին ընդգրկվել են միացյալ եվրոպական ընտանիքի կազմում, ստիպված են եղել իրականացնել վերոնշյալ բարեփոխումները:

Ամփոփելով այս ամենը, կարող ենք մշել, որ հարկային հարաբերությունների համակարգում համաշխարհային փորձի ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ Հայաստանում և մնանատիպ մի շարք զարգացող երկրներում անհրաժեշտ է իրականացնել բավականին մեծ թվով բարեփոխումներ՝ հիմնվելով համաշխարհային փորձի վրա: Այսինքն՝ մեր երկրում դեռևս չեն իրականացվում հարկային դրույքաչափերի իջեցումներ, բավականին ցածր մակարդակի վրա են հարկային համակարգում ժամանակակից էլեկտրոնային համակարգերի վրա գործող վճարումների մեխանիզմները, շատ հաճախ են իրականացվում հարկային օրենսդրության փոփոխություններ և լրացումներ, վարչարարության խստացումներ և այլն, որոնք չեն կարող իրենց բացասական անդրադարձը չունենալ ձեռնարկությունների և հատկապես ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության վրա: Սակայն մշված փորձի տեղայնացման հնարավոր ուղիները հարկավոր է լրջորեն քննարկել և վերլուծել՝ բացահայտելով դրանց ներդրման դրական և բացասական կողմերը, ինչպես մաս հնարավոր հակասությունները մեր երկրի տնտեսության մեջ գործելու առումով:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք մաս իրականացնել բարեփոխումներ հետևյալ ոլորտներում՝

- օրենսդրությունը դարձնել առավել թափանցիկ,
- նվազեցնել սպահանջվող մեծածավալ թղթաբանությունը,
- ճիշտ խթաններ ստեղծել հարկային վարչարարության միջոցով,
- ամրապնդել տեղեկատվության փոխադարձ փոխանակումը հարկային և մաքսային մարմինների միջև,
- բարելավել ԱԱՀ-ի վերադարձման համակարգը,
- բարելավել տուգանքների համակարգը,
- վերանայել հարկային դրույքաչափերը:

Հարկային համակարգի այս հատվածները մեր երկրում դեռևս ունեն մի շարք թերություններ և հարկավոր է համապատասխան մարմինների ուշադրությունը սևեռել այս հիմնահարցերի վրա, որոնց արդյունավետ լուծման ուղիները էականորեն կբարելավեն մեր երկրի հարկային համակարգը, ինչպես մաս կնպաստեն ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը: